զտեղին ։ Ցանդիման եղեւ Անդրիաս ատենին , եւ յետ լսելոյ զամբաստանութիւնս նոցա՝ առաջի արար զմուրհակս գրեալ օրինօք Շէրիի , որ լեալ էր տեղին սեփհական միաբանացն Հայոց աւելի քան զամս 20 · եւ յայտնի եղեւ ստութիւն այլազգեաց · եւ դատաւորն մերժեաց զնոսա յերեսաց իւրոց , և վերստին գրով հաստատեաց զտեղին ։ Թէպէտ և ելին արտաքս այլազգիք 'ի դատարանէ առանց բանս ինչ առնելոյ , բայց եդին 'ի մտի հասուցանել չարիս 'ի գլուխս Հայոց 'ի դէպ ժամանակի ։ Եւ չեւ եւս բոլորեալ էր շրջան տարւոյն , ահա աղմկեալ շփոթեցան , և յարուցեալ 'ի վերայ միաբանից՝ խնդրէին զվանս Ս · Փրկչի՝ ըղպարտէզն և զգերեզմանատունն , և տագնապէին պահանջելով զքսակս դրամոց՝ որոց չէր հնար հատուցանել զայնս , և յառաւելն նեղիլ և 'ի չգտանել յուստեքէ սատար փըրկութեան , բողոք կարդացին 'ի Դուռն Արքայի · յայտ արարեալ զբռնութիւնս այլազգեաց Սիոնի ։ Լուեալ արքայի զտառապանս Հայոց , գրեաց հրովարտակ առ քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի, առնել իրաւունս , եթէ անցեալ իցէ ամէ՝ 'ի վերայ խնդրոյն այսորիկ ամն 15 · մի՛ երբէք ունկն մատուջիք բանից այլազգեաց , և եթէ նոքա հակառակ օրինաց և Կայսերական հրամանին՝ շարժել կամին , որպէս յայտ արարին Հայք , արգելջիք զնոսա՝ եւ մի՛ թողուցուք լինել ձեռնամուխ 'ի գործս նոցա , և եթէ ոք անսաստ գտցի հրամանին՝ ազդ արասջիք առ 'ի Դուռըն , ՌԺԳ (1564) ։

Յետ վճարելոյ միաբանից զդատս՝ որ ընդ այլազգիս , կամեցան նորոգել զաւերեալ տեղիս Ս · Փրկչի վանաց · սակայն այլազգիք Սիոնի՝ և այլք խափանեցին զգործն , զի պահանջէին 'ի նոցանէ զինչս բազումս , իբրեւ ոչ կարացին հաճել զմիտս նոցա , յայտ արարին զխնդիր իւրեանց 'ի Դուռն Արքունի , եւ առին հրովարտակ , զի դատաւորն արգելցէ նոմա զբռնութիւնս այլազգեաց , և առանց պահանջելոյ զիրս ինչ , տացէ նորոգել Հայոց զվանս իւրեանց ։ Եւ մինչդեռ պատրաստեալ էին այսու խնդրով՝ Խաչատուր եպիսկոպոս եհան հրովարտակ յԱրքունուստ նորոգել նա և զվանս Բեթղեհէմի , զի այլազգիք ընդդիմանային այնմ եւս , ՌԺԴ (1565) ։